Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի << Մեծամորի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ 4 դաստիարակի՝ 0,56 դրույքաչափով, մեթոդիստի՝ 0,25 դրույքաչափով, երաժշտական դաստիարակի՝ 0,5 դրույքաչափով թափուր պաշտոնները համալրելու համար:

Վերոհիշյալ պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1. դիմում (Ձև 1)

2. կրթության մասին փաստաթուղթ՝ դիպլոմ

3. անձը հաստատող փաստաթուղթ

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ

5. ինքնակենսագրություն ՝ Ձև 4

6. լուսանկար 3x4 չափի

7. այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են զինվորական գրքույկ,կամ զինվորական կցագրման վկայական:

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

10. որակավորման տարակարգ (առկայության դեպքում

Փաստաթղթերի պատճենները անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 20 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից - 16:00-ն, բացի ոչ աշխատանքային օրերից:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կանցկացվի 2026 թվականի մարտի 27-ին՝ ժամը 14:00-ին, <<Մեծամորի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքում, հասցե՝ գ. Մեծամոր, Խ. Աբովյան փ. 1/2 :

Տեղեկությունների համար զանգահարել 094 18-98-82 հեռախոսահամարով: